

ժան և պառաւեալ երեսով՝ ՚ի սպիտակ բրդոյ մեծ ապարօշով՝ խառն նարկիս ծաղկօք պսակը՝ ՚ի գլուխս։ Այլք կուտան իրենց ոսկի պսակներ. երբեմն պարզ երիզ մը կը շրջապատեն անոնց զուսլը։ Հագուել երբեք քօղարկած կը հանդիսանան, սակայն կորնկոթսի տաճարին մէջ եղածներն այսպիսիք էին։ Սպի-

տակ զգեստ մը ծիրանի եզերովը՝ իր ծածկէ անոնց մարմինը. մին ունի զմկրատն, միւսն զիլիկն և երբորդն զազեկասն։ Լիկոփրոն կ'ըսէ թէ կաղը էին, և մատենագիրն երգի միոյ ՚ի վերայ Հէրմասի, որ Հոմերի կը տրուի, թէս ալ կը հնարէ անոնց։

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՒՆ ՎԵՆԵՏԿԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ (1)

Ստեպ կ'ըսուի թէ վենետկոյ ժողովուրդն լրտեսներով, բանտերով և դահլիճներով պաշարեալ ինքն իր ձայնէն կը դողար. և միւս կողմէն զայս ըսողներն կը մոռնան որ նոյն այս ժողովուրդս լի էր կատակաբանութեամբ և գիւտաւոր զուրջուածներով. ուրախ, զուարթ, անհոգ, զուարճասէր, որ կեանքը յաւիտենական բարեկենդանի մէջ կ'անցընէր։ Ինչպէս կը միաբանին այս երկու հակասական դատաստաններն։ Մենք ոչ ներբողեան կը գրենք և ոչ վիպասանութիւն, այլ պատմութիւն, և պատմութիւն մը որ պէտք չէ նոր երևնայ։ Հորերուն մէջ, որոնք իրաւցընէ հոր չէին, չարագործք կը նետուէին. և ասոնք արդեօք ուրիշ սր և իցէ տեղ լաւագոյն բանտ ունին։ Տէրութեան յանցարտներն կ'ապարք կոչուած բանտեր կը գրուէին, որոնք հիւղիկներ են՝ ոչ թէ անմիջապէս տանեսց կապարնեբուն տակ, այլ անկէ յարկ մը վար. անձուկք արդարև, բայց այնչափ որ կրնան ֆաղանովայի զուարճալի պատմութիւնները հնարաւոր ընել, կային առիւծու բերաններ, սակայն ամբաստանութիւնը ստորագրեալ պիտի ըլլային, և անանունք չէին ընդունուել, բայց միայն յօրինաց հաստատեալ պարագայից մէջ և շրջահասցեղութեամբ, որոնք խստիւ կը պահուէին։ Կային լրտեսք, բայց Տէրու-

թիւնն որ զանոնք վարձեր էր, նաև կ'արհամարհէր. և հետևելի օրինակով կը պահանջէր որ իրենց ըսածին ակնածելի վկայութիւններ յառաջ բերին. եւ քանի էին այս լրտեսներս, որոնք ամեն խօսք, ամեն շարժուածք, և ուսմ կին ամեն հառաչանքը պիտի բռնէին և պիտի իմացընէին. քննենք միայն վերջին դարը, որուն յիշատակարանքն Տէրութեան Քննչաց Գիւանին մէջ կը պահուին։ Կրտսէնիկոյ ատենագիրն իրեն քանի մը Տեղեկութեանց մէջ կը գրէր որ յամին 1718 Տէրութեան մէջ կը նուազէին մտերիմք (այսինքն լրտեսք) և փափաքելի էր անցընել զանոնք։ Ընդ ամենն երեք էին, այսինքն Ռինյալոյ Դարտինի, Պեռնարտին կարպինոզի և Պիոնեա անուամբ մէկն, որոնք ըստ կանոնի՝ ամեն չորեքշաբթի սովորական թերթեր կը բերէին։ Իսկ թէ մըտերիմք կը նուազէին և չէին անճր՝ 1764 և 1765 տարիներուն տեղեկութենէն յայտնի կ'իմացուի. « քաղաքին համար միայն Մանուչի կը ծառայէր »։ Արդ ուրեմն ՚ի վենետիկ լրտեսներու բանակ մը չկար, և Գերագոյն Ատեանն զժուարաւ կը գտնէր այն անկեղծ ժողովրդեան մէջէն մէկն որ յանձն առնու, ինչպէս կ'ըսուէր այն ժամանակ, մտերիմ ըլլալ Հետևանքն յայտնի էր. երեքն պէտք էին ամեն բան գիտնալ, և ամենաքիչ բան գիտէին. որով կրցան հաստատուիլ Ազատ Որմնագրաց

1 Տես Հա. Լէ. Պ. Գ. էջ 366.

(Francs-maçons) ընկերութիւնքն, ան-
 դամներ ժողովել, և ամբողջ Տէրութեան
 մէջ տարածուիլ առանց երեք անուա-
 նի քննչաց գիտութեան, որոնք պարզ
 դիպուածով իմացան զայն յամին 1785,
 Ուստի վարչութիւնն բնաւ չէր արդի-
 լած ազատօրէն շնչել, ինչպէս ոմանք
 կ'ուզեն հաստատել. կրնայ իսկ բուռի
 որ չէր ուզեր զայն: Աւելի ճոխաբար
 քան այլուր վենետիկ փոյթ ունեցաւ
 իրաւցընէ հասարակաց կրթութեան:
 Կային զպրոցք իմաստասիրութեան և
 իրաւագիտութեան, աշխարհագրու-
 թեան և ճարտասանութեան՝ գրատան
 և դիւանատան մէջ, դպրոցք՝ գրական,
 նութեան իւրօքանչիւր թաղերուն մէջ:
 զպրոցք նաւական, վաճառականական,
 երկրագործական, մազէմադիբական
 ուսմանց, գծագրութեան, քաղաքա-
 կան և զինուորական մշակութեան՝
 մայրաքաղաքին, ցամաք երկրին, Տալ-
 մացիոյ և կղզեաց մէջ. աղնուականաց
 կաճառն ՚ի ճիւտէքքա, պատրկաց ու-
 սումնարանն ՚ի Բատուա, Գեղարուես-
 տից Ակադեմեայն ՚ի վենետիկ, և Յի-
 սուսեանց բարձմանէն վերջը Գասպար
 կոծծի կրկին անգամ կանչուեցաւ կար-
 զագրելու մեր արդի անուսակներնա-
 կան կամ երկրորդական կոչած կըր-
 թութիւնները: Սակաւագիւտ հան-
 ճարը ՚ի համալսարան կը հրաւիրուէին,
 ոչ միայն գաւառներէն, այլ նաև իտա-
 լիոյ ամեն կողմէն: Հօն ներկայ գտնուե-
 ցաւ Գալիլէոս, որ դժբաղդաբար եր-
 կար չկեցաւ. վերջին դարուն մէջ դա-
 սատու եղան վալլիքնիէրի և Մորկա-
 նչի: Տպագրութիւնն ստրուկ չէր. ու-
 թիշ Տէրութեան և գլխաւորապէս
 Հռովմայ հետ հասարակապետութեան
 բարեկամութիւնը չխուռվելու համար
 ժամանակ մը թող չտրուեցաւ տպա-
 գրողաց՝ քանի մը դրբեր հրատարա-
 կել, բայց եթէ Ամսդէրտամբ, Լոնարա,
 Պազիլէա և Կողմնալոյս անուններով
 այս պայմանով թող տուեալ ազատու-
 թեան վկայագիրներն տակաւին կե-
 ցած են վենետիկոյ դիւանին մէջ: Գրոց
 առուսուրն վենետիկոյ մէջ շատ կեն-

դանի էր նաև այս պատճառաւ որ բազ-
 մաթիւ և տաղանդաւոր մատենագիրք
 կային ՚ի վենետիկ: Չենք ուզեր ամ-
 բողջ անուանց ցուցակ չինել այլ միայն
 վենետիկոյ անկման Տամանակները զայն
 պայճառացուցին Կորտոնի, Օրդէն,
 Ֆրսգարինի, Մորէլլի, Մէնարինի,
 Դոալտոյ, Բոլէնի, Գարպուրի, Ստրա-
 սիկոս, Սկիպիոն Մաֆֆէի, Աքոսդո-
 լոյ Մէնոյ, Ֆրամինիոյ Գոսնէր, Վիկտոր
 Սանդի, և Գասպար ու Կարոլոս կոծ-
 ծիները: Կարծուածէն աւելի ազատու-
 թեամբ գրբեր և լրագիրներ կը հանէին
 ասոնք. իրաւ է թէ երբեմն ինչ ինչ հրա-
 տարակութիւնը արգիլուեցան. սա-
 կայն այսօր իսկ Տէրութիւնն երբեմն
 Օրագրոց քանի մը թուականներ կ'ար-
 գելու, հանդերձ այսու՝ տպագրութեան
 ազատութիւնն չվերնար: Ուրեմն նոր
 գաղափարք մուտք գտած էին ՚ի վենե-
 տիկ և նոյն իսկ ժողովրդեան բարձրա-
 գոյն դասերուն մէջ իրենց պաշտպանքն
 և հետևողներն ունէին: Կային նոյնպէս
 նաև աղնուականք, ոչ միայն անկեալը
 ՚ի պատուոյ, որոնք փոփոխութեամբ կը
 յուսային վիճակներն լաւցընել, այլ և
 հարուստք, իշխանաւորք և անդամք
 այն սակաւապետութեան որ վաշխար-
 հըն ալ ըստ իւր քմաց կը վարէր. յի-
 շներք միայն զԱնճէլօ Գուիրինի և զԱլ-
 վիզէ Մէնոպիոյ. յորոց վերջինս համ-
 արձակ և ազատ գրութիւններ հրա-
 տարակեց ՚ի Գալղիա և յԱնգղիա: Ուս-
 տի աղնուականութիւնն թուրութեան
 և շտայլութեան մատնուած էր, հան-
 դէսներու և շեղ ամբարնոցներու մէջ
 կ'անցնէր, կը վատարէ իւրապրակին
 (Ridotto) մէջ, գրօսարանց (Casino)
 մէջ կը շաղակրատէր, թատրոնները կը
 վազէր, և իր անկմանէն քիչ առաջ կը
 կանգնէր գփիւնիկ (1) (1791): Սակայն
 բողոքովն չմոռնալով իր նախկին մե-
 ծութիւնը՝ կը շինէր Թռալբերը (2)

(1) La Fenice, վենետիկոյ առաջին և գեղե-
 ցկապոյ թատրոնն:
 (2) I Murazzi, 12,000 ոտք երկայնութեամբ
 պատ մը, որուն նպատակն էր ազատել զվենե-
 տիկ Աքրիականին ալքերէն:

(1774-1782). և ներկայ յառաջագի-
 մութեանց արժանավայել զըբեր կը
 գրէին, Մարկոս Պարպարոյ՝ քրէական
 օրինաց վրայ, Յակոբ Նանի՝ քաղաքա-
 կան տնտեսութեան և Պետրոս Մոյե-
 նիկոյ՝ ընկերական բարեկարգութեանց
 վրայ. կը շինէր դարձեալ մանրամասն
 վիճակագրութիւն մը. կը կանոնաւո-
 րէր անժառանգելի ստացուածները
 (mainmorte), տօներու և քահանայից
 թիւը, Տէրութեան և Հռոմիոյ մէջ
 յարաբերութիւնքը. կը ջանար, թէ
 և 'ի զուր, խախտեալ ճարտարութիւ-
 նը վերականգնել, օրհասական վաճա-
 ռականութիւնը կենդանացնել առա-
 տաձեռն միջոցներով. Օրինագրոց մէջ
 նոր բարեկարգութիւններ կը մտցնէր
 կամ կը պատրաստէր. վերջապէս բա-
 րոքման ճամբուն մէջ կը մտնէր. և ա-
 ռանց յանդգնութեան՝ ինչպէս նաև ա-
 ռանց երկիւղի՝ կը ցուցնէր վերջին ա-
 մաց մէջ ալ թէ հին իմաստութիւնը
 բովանդակ կորսընցուցած չէր:

Արդ Գաղղիոյ Յեղափոխութեան
 ժամանակ վենետիկ այս վիճակի մէջ
 էր: Ժողովրդեան մեծ մասն իր հին
 գաղափարաց ետե՛է էր, կը սիրէր Ս.
 Մարկոսի հասարակապետութիւնը, և
 ամենայն փոփոխութիւն կը մերժէր:
 Սակայն ոմանք ալ ժամանակին գաղա-
 փարաց հակամէտ էին, և հաւասարու-
 թեան փափաքելով, թերևս անցելոյն
 յիշատակն իսկ կ'ուզէին ջնջել: Մեծա-
 գոյն ժողովոյն մէջ հակառակն կը հան-
 դիպէր. փոքրագոյն մասն պահպանո-
 ղական էր. իսկ մեծամասնութիւնն
 կամ համոզմամբ, կամ փառասիրու-
 թեամբ և կամ տկարութեամբ նորու-
 թեանց կը փափաքէր. մինչև կային
 իսկ ոմանք որոնք առանց դժուարու-
 թիւնքը և հետևանքը մտածելու՝ կ'ու-
 ղէին 'ի հիմանց կերպարանափոխ ընել
 զՏէրութիւնը: Իբրև է թէ այս բազմա-
 թիւ ժողովոյն մէջ քաղաքագիտական
 գործոց վրայ չէր խօսուեր, այլ ծերա-
 կուտին և ֆինչաց և Տասանց ժողով-
 ներուն մէջ. սակայն ընդ մէջ ասոնց և
 առաջնայն՝ կային իմաստունքն, ո.

րոնք կանխաւ յիշեալ պատճառներով
 մեծ ազդեցութիւն ունէին հասարա-
 կապետութեան վարչութեան վրայ,
 Արդ ամենայն ընտրութիւնք ուղղակի
 կամ անուղղակի Մեծագոյն ժողովով
 կ'ըլլային. ուստի դիւրին էր դուշակել
 թէ վերջապէս հասարակաց օգուտն
 որպիսի ձեռաց մէջ պիտի ինկնար:
 Եւ իրաւցընէ օրէ օր վտանգն մեծ և
 յայտնի ըլլալով Ներակոյտն յիմաս-
 տնոց գրգռեալ՝ անգէն չէզբրութիւն ու-
 ղոյնց, և յետոյ ընդունեցաւ Գաղղիոյ
 դեսպանը (26 յունուար 1793) և
 ներկայացուցիչ մ'ալ զրկեց 'ի Բարիզ
 (7 մարտ 1795): Եւ երբ Յեղափոխու-
 թեան հեղեղն՝ և իւր իսկ երկրին մէջ
 յՍուտրիոյ և 'ի Գաղղիոյ կրած մեծա-
 մեծ ֆրասներն և անարդանքն ցնցեցին
 զոգնները, և համոզեցին, ինչպէս որ 'ի
 սկզբանէ խորհուրդ տուած էր ֆրան-
 կիսկոս Բեղարոյ, մէկդի թողլու անգէն
 չէզբրութեան վատ գաղափարը. նախ
 մեծ դանդաղութեամբ ոկսան դարման
 տանել և յետոյ տեղի տալով Պոնաբար-
 դի անարգական տիրապետութեան՝ ետ
 կեցան (8 յուլիս 1796): Անդադար առ
 համարհանաց դէմ՝ ներակոյտն՝ ցառալի
 համակամութեամբ կը պատասխանէր,
 և զրգռեալ ու քաջասիրտ հպատակաց
 առաջարկութիւնը մերժելով, կը դո-
 ղար թէ արգեօք վերոնայի ապստամ-
 բութիւնն և լիպլերադօրէ նաւուն գե-
 րութիւնն ինչ հետևանք պիտի ունե-
 նար (17 ապրիլ 1797): Իրաւցընէ նա-
 բոլէոն որ նոյն օրերն լէօպէնի դա-
 շանց նախապատրաստութիւնքն ըստու-
 րագրեր էր, և զհասարակապետութիւ-
 նը, իբրև իրեն ստացուածքն, մեծաւ
 մասամբ բաժնեւր էր, վերջապէս մէկդի
 դրաւ ամենայն դիմակ. և անարգանօք
 ընդունելով անոր երկու դեռպանները՝
 կ'ուզէր որ փութով իրեն ձեռքը տրուին
 Տէրութեան քննիչքն և լիտոյի բերդին
 հրամանատարը, ծանուցանելով որ
 « ուրիշ ազգեր ալ ազատեր էր » և թէ
 կու գար խորտակելու « վենետկեցւոյն
 շղթաները » (1 մայիս): Ի՛նչ կերպով
 պէտք էր արդեօք դէմ դնել հակառակ

կենալ թշնամուցն . ցամաք երկիրն զի-
նու զօրութեամբ կամ գրգռուալ ապրս-
տամբութիւններով բռնած էին . կը
մնար միայն պաշտպանել զճակը , եթէ
տակահին կարելի էր . այս անազան և
ընդունայն պաշտպանութիւնն հին
Բրեկատից յետին վճիռն եղաւ : Մե-
ծագոյն ազնուականներէ ժողով մը
գումարուեցաւ (30 Ապրիլ) Տոփին սե-
նեկաց մէջ , և որոշեց խնդրել Մեծա-
գոյն յողովէն որ իշխանութիւն տայ
բանակցել Պոնաբարդի հետ վարչու-
թեան կերպին մէջ մտնելիք փոփոխու-
թեանց վրայ : Ստանալով զայն մի և նոյն
օրն յորում Նաբոլէոն պաշտօնապէս
պատերազմ կը հրատարակէր վենետ-
կոյ զէմ , անկէ վերջը սկսան ամօթալի
միջոցներու ձեռք զարնել : Այս ընդհա-
նուր լքման ժամանակն իսկ եղան մեծ-
անձնութեան օրինակներ , որոնք ա-
պշեցուցին զՊոնաբարդ . սակայն մե-
ծագոյն էր կուրութիւնն կամ վատու-
թիւնն : Մայիսի 4ին ժողովն որոշեց ,
ըստ պահանջման ձերբակալել Տէրու-
թեան ֆինիշները և լիտոյի հրամանա-
տարը . ութ օր վերջը (12 մայիս) կ'ըն-
դունէր առաջարկեալ առձանաւա-
կեայ ներկայացուցիչ վարչութեան
օրէնքը . միայն քէ այսու զօրավարին
(Պոնաբարդի) փափաքն կատարուի .
որ սակայն չէր կատարուեր . վասն զի
Գաղղիոյ բերած ռամկապետութիւնն
Աւստրիոյ տիրապետութիւնն և լուծն
եղան :

Կեցցէ Ս . Մարկոս , աղաղակեց ժո-
ղովուրդն , կարծելով թէ եղածին հա-
կառակ ըլլայ ազնուականաց որոշողու-
թիւնն , որոնց հպարտեակալ էր հինգ
դարէն 'ի վեր . և քաղերին մէջ յրուեցաւ
սպառնալով այն տանց և անձանց զէմ
որոնց վրայ կը կասկածէր կամ զիտէր
թէ պատճառ էին փոփոխութեանց :
Բայց զինուորութիւնն փութով ընկճեց
ամենայն խլրտումն :

Ասոր վրայ յաջորդեցին ռամկային
հասարակապետութեան խառնաշփոթ
հանդէսներն . արդարև ամօթալի հան-
դէպք , սակայն կարճատև : Հոկտեմբե-
Պրաք Դ .

րի 17^{ին} Պոնաբարդ կը վաճառէր զնոր
հօտն առ Աւստրիացիս , որոնք մտան 'ի
վենետիկ յ18 յունուարի 1798 : Դար-
ձեալ մտան Գաղղիացիք յ19 յունուա-
րի 1806 , և կրկին անգամ Աւստրիա-
ցիք 'ի 20 ապրիլի 1814 : Այս տեսարց
փոփոխութեամբ մանաւանդ Աւստրիոյ
ներքև ' այնչափ մեծ եղաւ անոր ան-
կումն , որչափ զարմանալի եղեր էր
փառաւորութիւնն : Ազատ նաւահան-
գիտն (1830) և իսաղաղութիւնն ժա-
մանակ մը նիւթական զարգացումն մը
պատճառեցին . որք սակայն 1848-49^{ին}
զիւցազնական զործերով և անոր յե-
տագոյ բռնակալութեամբ գրեթէ 'ի
հիմանց ջնջուեցան : Գուստոզայի ճա-
կատամարտն (24 յունիս) , և Սատո-
վայի յաղթութիւնն (3 յուլիս 1866)
իտալիոյ հետ միացուցին զվենետիկ ,
որ կը ճգնի վերականգնելու :

Ա Ր Բ Ե Ր Ե Ի Ե Լ Ի Բ

վենետիկ քաղքին երևելի մարդկանց
չասն կամ պատմութեանս ընթացքին
մէջ յիշուած է և կամ յաջորդ մատե-
նագրաց շարքին մէջ պիտի տեսնենք :
Սակայն որպէս զի այս մասս ալ չպակ-
սի , կը յիշատակենք այս տեղ զմանս ,
ժանուցանելով միանգամայն որ եթէ
ամբողջութեան մէջ երևեալագոյնք ո-
մանք կը պակսին , զանոնք վերագոյն
յիշած ենք :

վենետիկեան ազնուապետութիւնն
հինգ ֆահանայապետ կը պարունակէ .
Գրիգոր ԺԲ (Գորրէր) մ 1417 . Եւզե-
նէոս Գ (Գոստուլմէ) մ . 1447 . Պօ-
ղոս Բ (Գառպոյ) մ . 1471 . Ալեքսանդր
Ը (Օրգուպոնի) մ . 1691 . Կղեմէս ԺԳ
(Ռէցցոնիքոյ) մ . 1769 .

Սրբակրօն կենաց նկատմամբ երևե-
լի են Պետրոս Օրսէոյ տոմն , վախ-
ճանեալ 'ի Գաղղիա յամին 997 . Ճե-
րարտոյ Սակրէտոյ , եպիսկոպոս և նա-
խավկայ Հունգարիոյ , մ . 1047 . Պե-
տրոս Արդոյանոյ , աղքատասիրու-
թեամբն հռչակաւոր , մ . 1187 . Լա-
րէնտիոս ձիուողիներանի , առաջին պա-
23

տրիարգ և գովելի գրիչ, մ. 1456. Հե-
րոնիմոս Միանի, հիմնադիր Սոմադրեան
կրօնաւորաց, մ. 1537. Գրիգոր Պար-
պարիկոյ, հիմնադիր մեծի կղերանս-
ցին Բատուայի, մ. 1697:

Վերնտկեցի կարգինալաց մէջ Նշա-
նաւոր են Էրմուղոյ Պարպարոյ, քաղա-
քագէտ և գրական, սահմանեալ պա-
տրիարգ Ագուիլէայ, մ. 1493. Դովի-
նիկոս Կրիմանի, մշակիչ իմաստասի-
րութեան, աստուածաբանութեան և
դպրութեանց, պատրիարգ Ագուիլէայ,
մ. 1523. Գասպար Գոնդարինի, իմաս-
տասէր, աստուածաբան, և քաղաքա-
գէտ, մ. 1542. Պետրոս Պեմպոյ, գրա-
գէտ, մ. 1547. Բեռնարդոս Նավաճե-
րոյ, գրագէտ, իմաստասէր, պաշտօ-
նեայ Տէրութեան, մ. 1565. Մարկոս
Անտոնիոս Տա Մուլա, վարուէտ անուա-
նի, մ. 1572. Օրոտտինոս վալիէր, ա-
նուանի աստուածաբան, մ. 1606. Ան-
ճէլոյ Մարիա Գուիլիմի, մեծանուն մա-
տենագիր, մ. 1755:

Ճանապարհորդաց և նաւորդաց մէջ
բաց 'ի Նիկողայոսէ Մատթէոսէ, և
հռչակաւոր Մարգո-Ռոլոյէ, յիշատակի
արժանի են Մարին Սանուուոյ, Գորսէլ-
լոյ կոչեցեալ: Նիկողայոս և Անտոն' եղ-
բարք կարոյոս Ծէնոյի, որոնք յի դա-
րուն վերջերն այցելեցին կրօնէլանտիոյ
ժովեղերքը: Նիկողայոս Գոնդի, որ
1424էն ց1449 ճանապարհորդեց Ա-
սիոյ հարաւակողմը: Յովսաբատ Պար-
պարոյ, դեսպան հասարակապետու-
թեան յՈւզունհասան յամին 1473, որ
յարգի և 'ի նորոց իսկ հաստատեալ տե-
ղեկութիւններ տուաւ Պարսկաստանի,
Վրաստանի, արևմտեան թաթարստանի
վրայ: Ալվիզէ Գատամիսոյ, որ 1445էն
հասաւ կամպիոյ արքերակունքը, և յա-
ջորդ տարին գտաւ Դալարի գլխոյ
կղզիքը, կամպիայէն վեր բարձրացաւ
մինչև 60 մյոն հեռու անոր աղբերէն,
և գնաց 'ի հարաւ մինչև 'ի Ռիոյ-Կրան-
տէ: Յոնաննէս Գապոդոյ, որ 1497-98
ամաց մէջ փորձեց Հիւսիս-արևմտեան
անցքը իր Սեբաստիանոս օրդոնոս հետ,
որ և ինքն յամին 1526 ճանապարհոր-

դեց 'ի Ռիոյ տէլլա Բլադա, և այլն: Լի-
վիոս Սանուուոյ, նշանաւոր աշխարհա-
գիր ժամանակին, մեռեալ յամին 1576:

Երեկելի կանանց մէջ կրնան այս տեղ
յիշուիլ թոմազինա Մորոզինի, որ
հարանտոց և չունգարիոյ Ստեփանոս
Թագաւորին յամին 1287, և Գոսդային
Մորոզինի, կին Վլատիսլաւայ արքային
Սերվիոյ յամին 1305. Գասանտրա Ֆե-
տելէ, կին գիտնական մ. 1558: Վերո-
նիքա Ֆրանչոյ, Ասպասիայն իր օրե-
րուն, որուն այցիլութեան եկաւ Հեն-
րիկոս Գ. յամին 1574 և դէմքն իսկ
նկարել տուաւ մեծանուն Դինգորէդ-
դոյի, սակայն իւր վերջի տարիներն
առաջնոց վրիպակներն ուղղեցին: Մո-
տերադա Ֆոնդէ, մ. 1592, և Լուքրէ-
ցիա Մարինէլլա, մ. 1613, բանաստեղծք
և արձակ գրիչք: Եղիսաբեթ Դուրրա,
ընտիր թարգմանիչ, և վաստակակից
ասպա ուղղիչ Նոր հումայնագիտական
Օրագրին, մ. 1796: Մարիէզզա Ռո-
պուզի (Դինգորէզդոյ), մ. 1588, և
Ռոպուլպա Գարրիէրա, մ. 1757, նկար-
չուհիք: Լուիճի Գարրէր' իր Մանեակ
եօրն գոհարաց գրոց մէջ վննեակեցի
եօթն կանանց վարքն կը պատմէ, ո-
րոնց զխաւորքն կատարինէ Գորնարոյ,
Պիանզա Գարրէլլոյ, Եւփիմէ Ճիուզի-
նիան, և Հեզինէ Գորնէր ֆիսգոփիա:

Տէրութեան կամ պատերազմական
անձինք չենք յիշեր, վերագոյն պատ-
մած անձանց կրկնութիւն մը չըլլալու
համար:
Մեր յիշատակած մատենագրաց
վրայ պէտք է աւելցրենք նաև Յով-
հաննէս Գուիլիմի' Տանդէի բարեկամն,
Ճիանֆրանչեսկոյ Սակրետոյ' Գալի-
լէոսի բարեկամն, Յովհաննէս Գոռնա-
րոյ գրողն Ճուժիկալ կեանաց, մ. 1565.
Վիկտոր Դրինգալէլլոյ, մ. 1563, և Նի-
կողայոս Մասսա, մ. 1569, բժիշկք և մա-
տենագիրք. Պոլոս Մանուգիոյ, մ. 1574,
Ալտոյ Մանուգիոյ կրտսերն, մ. 1597,
Պոլոս, մ. 1600 և Հերոնիմոս Ռամու-
զիոյ, մ. 1610 և Լուքովիկոս Լոյլինոյ,
մ. 1625, գրագէտք. Սեբաստիանոս Է-
րիցցոյ, գրիչն վեց աշուրց, այր բազ-

մահմուտ և մտօք բարձրագոյն քան
զիւր դարն, մ. 1585. Մոլեմիկոյ Լու-
դովիկոս, շիամիլքելէ Պրուգոյ և Յով-
հաննէս Սակրէտոյ, յորոց յետինս
գրած է Պատմական յիշատակարանք
Օսմանեան Ինքնակարգ (1677) :
Լաւրենտիոս Բաղարոյոյ, երևելի մը-
շակիչ և գրող գրամագիտութեան, մ.
1727, Պատարոյ Պետրոս իր ժամանա-
կին կիկերոնն, մ. 1594, Դանիէլ Պար-
պարոյ, փրանկիսկոս Լորետան, Թով-
մաս Դեմանցա, Հարքն Գորոնէլլի, և
այլն, և այլն :

Համառօտ Պատմութեանս մէջ յի-
շուլ մեծանուն արուեստաւորաց վրայ
պէտք է դարձնալ յիշատակել՝ Պե-
տրոս, Տուլլիոս և Սանդէ՝ մակիտուա-
նեայք Լոմպարտոյ, Անտոն տա Բոնդէ,
մ. 1597, Բաղտասար Լոնկենայ, մ.
1683, ճարտարագետք. Անտոն Գանալ
կամ Գանայէդոյ, երևելի երևութա-
գիծ նկարիչ (prospettivista), մ. 1768 .
Յովհ. Մկրտիչ Դիէբոլէդոյ, հոչակա-
ւոր ջրանկարիչ, մ. 1769. Յովհ. Մկր-
տիչ Բիրանեզի, նշանաւոր փորագրող,
մ. 1778. Պոնիֆաչիոյ, Սգարբանյինոյ,
Դիրալի, Լոնկի, երևելի նկարիչ վենե-
տկեան տարազուն, Մաճճիոզոյ,
Բիացցէդո, Նովէլլի, և այլն : Միւսիո-
նագործաց զպրոց մ՝ալ կար, նշանա-
ւոր անձինքն են Մուրքադոյ, Պիանքի-
նի, Պոցցա, և այլն :

Երաժշտութիւնն ալ մասնաւորապէս
մշակուած է ՚ի վենետիկ. վենետկեցի
երգի վարժապետաց մէջ պէտք չէ մոռ-
նալ Մարլինոյ (Թէ և ՚ի Բիոնճիա ծը-
նեալ) ուղղիչ մատրան Ս. Մարկոսի, մ.
1599. Պոնալէնդուրա Ֆուրլանէդոյ,
մ. 1817, և մեզի ժամանակակիցն Յով-
հաննէս Ֆէրրարի՝ հեղինակն վերջին
առշուրց Սիւլլիի և ուրիշ յարգի երկա-
սիրութեանց . բայց ասոնց ամենուն
վրայ իբրև արժւոյ մը պէս կը խոյանայ
մեծանունն Բենեդիկտոս Մարչելլոյ,
մ. 1839 :

Մեր օրերուն երևելի անձինքը բու-
լբորովին զանց չընելու համար, յիշեմք
Դանիէլ Մանին գիկատտօրն 1848-49ին,

Հերոնիմոս Տանտոլոյ և Օգոստինոս
Սակրետոյ, գրողք հայրենի պատմու-
թեան. Փրանկիսկոս Նէկրի, Սամուէլ
Ռոմանին, և այլն և այլն, որոնք զբա-
նասիրութիւն և զպատմութիւնն ծաղ-
կեցուցին :

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Բ Ա Վ Ա Ն Գ

Վենետիկեան մատենագրութիւնը
հրատարակած է Ջիբոնեա (վենետիկ
1847), որ 5942 երկասիրութեանց յի-
շատակութիւն պարունակելուն համար՝
տեսնելու արժանի է անոնց որ վենե-
տոյ հասարակապետութեան պատմու-
թեան կ'ուզեն խորամուխ ըլլալ : Ասիկէ
զատ կը յիշեմք ուրիշ քանի մը գլխա-
ւոր երկասիրութիւններ, որոնցմով կա-
րելի է պարզ գաղափար մը ստանալ
նախնի հասարակապետութեան պատ-
մութեան և անցից վրայ :

Ժամանակագրութիւն գրողաց մէջ
ցարդ հրատարակուեցան Սակոնինոյ,
Մարտինոս տա Գանալէ, Անդրէաս
Տանտոլոյ, Վարք առժից Մարին Սա-
նուտոյի, Տարեգրութիւնք Մալիքիերո-
յի, ժամանակագրութիւնք Յովհաննէս
Պեմպոյի և Նալաճերոյի . մերձաւոր ա-
մաց մէջ վենետիկեան դիւան ուսու-
մնաթերթին հրատարակեց կարալոսի Ը
արշաւանքը՝ գրեալ ՚ի Մարին Սանու-
տոյէ, Բարիզ զսնուած միակ օրի-
նակէն հանելով :

Տէրութեան հրամանաւ գրող պատ-
մըչաց անուանքն ասոք են . Մարքան-
դոնիոյ Սապէլլիզոյ, մ. 1487. Պետրոս
Պեմպոյ, մ. 1512. Պօղոս Բարուչա, մ.
1551. Անդրէաս Մորոզինի, մ. 1615 .
Մկրտիչ Նանի, մ. 1674 . Միլքայէլ Ֆոս-
գարինի, մ. 1690. Պետրոս կարցոնի,
մ. 1743 :

Նորոց մէջ հանրածանօթ են Գար-
բելլէդդի և Ռոմանին . Գաղղիացւոց
մէջ նշանաւոր է Լոժիէ, որ անցեալ դա-
րուն մէջ գրեց, այլ ազատ չէ ՚ի վրիպա-
կաց . կալիպէր, սր արդի քաղաւածոյ
պատմութիւն մ'է : Ճարտարահիւս՝ սա-
կայն թշնամանական ոգուով գրեց Տա-

րիւ իր Պատմութիւնը , առ որ շատ զգուշութեամբ մերձենալու է : Ի Գերմանացոց երևելի է լեպրէզ, և այլն : Ասոնցմէ զատ զեռ շատ ուրիշ հին և

նոր վեճեակեցի պատմիչք և մատենադիրք կրնայինք յիշել, սակայն դրուած քիսհամառութիւնն չներէր մանրա մասանց իջնել :

Ե Ր Կ Ա Թ Ե Ա Յ Դ Ի Մ Ա Կ

Չանազան ազգաց պատմութիւնք կ'աւանդեն մեզ իրենց մանրապատում գիպաց մէջ այնպիսի անձինք , որոնք խորհրդաւոր մաս մ'ունեցած են պատմութեանց մէջ , և նոյն իսկ իրենց էութիւնը խորհրդաւոր նիւթ մը դարձած է մեզի համար , և բազմաթիւ խուզարկութիւնք անօգուտ ելլեր են փարատելու այն խաւարն որ գիրենք կը պատէ : Այսպիսի անձինքներէն մէկուն վրայ միայն կը փափագինք համառօտ մը խօսիլ , որ ծանօթ է պատմութեան մէջ երկարեայ դիմակ անուամբ :

Մազարէն ծիրանաւորին մահուրէն տարի մը վերջը , ՚ի 1652 , մեծ զգուշութեամբ անձանօթ անձ մը Բիյնըրօյի գղեակն տարուեցաւ , որ ՚ի 1686 նոյն գղեակին Սէն-Մար կոչուած զխաւորէն Ս. Մարգարիտա կղզին փոխադրուեցաւ : « Այս անձանօթ բանտարգեայր , կ'ըսէ Վոլդէր , բնական մարդու հասակէն երկայն էր , ազնիւ և շնորհալից երիտասարդ մը : Ճամբան դիմակ մը դրած կը քայլէր , որուն կզակակապը պողոպատէ զսպանակներ ունէր , որով դիմակը երեսն եղած ատենն ալ , ազատ կրնար կերակուրն ուտել : Ով որ զինքը բաց երես տեսնէր , կրնար սպաննել : Այս անձանօթը Մ. Մարգարիտա մնաց , մինչև որ Սէն-Մար Պասշեյի վերակացու ըլլալով ՚ի 1690 , հասնեց զինքն այն կղզիէն և Պասշեյլ տարաւ , միշտ զէմբը գոց : Լուվուայի մարգիւր փոխադրութենէն առաջ գնաց զինքը տեսնելու , և խօսեցաւ հետը ոտքի վրայ և յարգանքը : Այս գղեակին մէջ ինչ որ ուզէր կը արուէր իրեն : Շատ կ'ախորժէր ազնիւ լաթեզէննե .

րով և ժապաւէններով զարդարուիլ . կիւթ առ կը զարնէր : Ճոխ սեղան մ'ունէր միշտ և վերակացուն իր գիմացը կը նստէր : Պասշեյլի ծեր բժիշկ մը , որ յաճախ կը տեսնուէր անոր հետ հիւանդութեան ժամանակ , բսեր է որ իւր զէմբը երբէք տեսած չէր : Շատ աղէկ կազմուածք ունի , կ'ըսէր . մտրթը թխագոյն էր , երբէք չէր զանգատեր իր վիճակին վրայ , և իրեն սով ըլլալը չէր ուզեր որ գիտնան :

« Այս անձանօթը մեռաւ ՚ի 1703 , և թաղուեցաւ գիշերը Ս. Պողոսի ժողովրդապետութեան մէջ : Այս է զարմանալին որ երբ զինքն ՚ի Ս. Մարգարիտ փակեցին , Էւրոպայէն բնաւ յերևելի անձանց մէկը չպակսեցաւ , մինչդեռ ապահովագէտ երևելի անձ մ'էր , և ասոր նշան հետեւեալ հանդիպածը : Վերակացուն իր ձեռքովը կը դնէր պնակքը սեղանին վրայ , և զինքը փակելէն վերջը կը զանուէր : Օր մը բանտարգեայր արժամօթ պնակի մը վրայ դանակով գրեց և պնակը պատուհանէն վար նետեց , զէպ յաշտարակին ստորտն եղած նաւակի մը քով : Նաւակին տէրը որ ձրկնորս մ'էր , առաւ պնակը և վերակացուն տարաւ : Անիկայ զարմացած հարցուց ձկնորսին . « Կարդացիր պնակին վրայի գրուածքը , և մէկը տեսնաքու ձեռքդ այս պնակը : — Կարդալ չեմ գիտեր , պատուհանեց ձկնորսը , հիմա գտայ զայն , և ոչ ոք տեսաւ » : Գիւղացին ազատ չձգուեցաւ , մինչև որ վերակացուն աղէկ մը չտեղեկացաւ որ կարդալ չէր գիտեր , և թէ պնակն ուրիշը տեսած չէր : « Գնա՛ւ , ըսաւ , երանի տուր , որ կարգալ չէիր գիտեր » :